«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Բուլինգի ենթարկված աշակերտները
Հետազոտող ուսուցիչ՝ Եվա Ղազարյան

դպրոց՝ -----

Բովանդակություն

1. Ներածություն …….**3**
2. Գլուխ 1. Դպրոցը և բուլինգը……..**5**
3. 1.2 World Vison, Save the children –ի հարցման արդյունքները……..**7**
4. 1.3 Իմ կատարած հետազոտությունը……...**8**
5. Գլուխ 2 Միջազգային փորձը……**13**
6. 2.1 Ի՞նչ է ուսուցչի ահաբեկումը……...**15**
7. Եզրակացություն ……**19**
8. Գրականության ցանկ ……**20**

Ներածություն

Բուլինգը ֆիզիկական, էմոցիանալ, սոցիալական և այլ բնույթի վնաս պարունակող գոր-ծողություն է՝ ուղղված որևէ անհատի կամ խմբի՝ գործողությունն իրականացնողի թը-վացյալ կամ իրական առավելությունն ու արտոնություններն ամրապնդելու նպատակով: Դիտարկենք որոշ պատկերացումներ բուլինգի մասին տարբեր հետազոտություններում:

Դ. Օլվեուսը բուլինգը հասկանում էր, որպես բռնության հատուկ տեսակ, երբ մեկ մարդ (կամ խումբ) ֆիզիկապես հարձակվում է մեկ այլ մարդու կամ խմբի վրա, իսկ վերջինս թույլ է և չի կարող ինքն իրեն պաշտպանել և ֆիզիկապես,և հոգեպես:

Ի.Ն. Կոնան մեկնաբանում է բուլինգն ինչպես վախեցնելու ցանկություն կամ ֆիզի-կական ու նաեւ հուզական ահաբեկչություն՝զոհի մոտ վախ առաջացնելու և նրան ենթարկեցնելու նպատակով:

Դ.Լեյնը բուլինգ երևույթը հասկանում էր որպես ֆիզիկական և հոգեբանական երկա-րատև բռնություն անձի կամ խմբի կողմից ուրիշ անձի հանդեպ, ով չունի ինքն իրեն պաշտպանելու հնարավորություն:

Ի.Բեռդիշևը բուլինգի ներքո հասկանում է գիտակցված, երկարատև բռնություն՝ուղղված ինքնապաշտպանության նշաններից զուրկ որոշակի քանակի մարդկանց:

Բուլինգը լայնորեն տարածված է հատկապես դպրոցներում. այն կարող է լինել **մի քանի տեսակի**.

Հոգեբանական բուլինգ

Աշակերտ(ներ)ին ծաղրելը, անվանարկելը, ճնշելը, արհամարհելը, շրջապատից բացառելը, բանբասանքներ տարածելը և այլ գործողություններ, որոնք նսեմացնում են աշակերտի արժանապատվությունը և բացասաբար ազդում նրա հոգեբանության վրա:

Ֆիզիկական բուլինգ

Դպրոցում աշակերտ(ներ)ի մարմնին միտումնավոր վնաս հասցնելը, նրա իրերը,

ունեցվածքը փչացնելը: Այս տեսակն իր մեջ ներառում է այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ հարվածելը, հրելը, իրերը վնասելը, հետապնդելը, սպառնալը, մազերը քաշել/կտրելը և այլն: Բուլինգի այս տեսակին սովորաբար նախորդում է վերբալ կամ հոգեբանական բուլինգը: Ֆիզիկական բուլինգը կարող է ունենալ շատ լուրջ հետևանքներ աշակերտի կյանքի և բարօրության վրա:

Սեռական բուլինգ

Նսեմացնելը՝ թիրախավորելով սեռական բառապաշարի, ժեստերի կամ բռնության կիրառմամբ, ինչպես նաև զոհացնելով մեկին իր արտաքին տեսքի համար: Այս տեսակի դրսևորումները ներառում են առերես կամ առցանց սեռական բնույթի բանբասանքներ տարածելը, արտաքին տեսքի վերաբերյալ անցանկալի հայացքներն ու արտահայ-տությունները, սեռական բնույթի շանտաժը և դրա միջոցով սեռական գործողություն անելուն հարկադրելը, սեռական ակնարկներն ու առաջարկները, սեռական ոտնձգու-թյունն ու բռնաբարությունը:

Կիբեր բուլինգ

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով աշակերտին ծաղրելը, վիրավորելը՝ առցանց կամ հեռախոսային հաղորդագրությունների ձևով, սոցիալական ցանցերում աշակերտի մասին ծաղրական բովանդակությամբ տեղեկատվություն /լուսանկարներ տարածելը և այլն:

Գլուխ 1. 1 Դպրոցը և բուլինգը

Դպրոցական բռնությունը կարող է առաջանալ դպրոցի ցանկացած տարածքում `դպրոցի շենքում կամ դրա շրջակայքում, չնայած այն ավելի հաճախ հանդիպում է ֆիզկուլտուրայի, արձակուրդների, միջանցքների, լոգարանների, դպրոցական ավտոբուսների և ավտոբուս-ների սպասման, ինչպես նաև դասարանների համար, որոնք պահանջում են խմբային աշ-խատան և/կամ դպրոցական գործունեությունից հետո: «Ոչ մի խնդիր չի կարող լուծվել այն հետևանքներով, որոնց պատճատով առաջացել է խըն-դիրը»:Բուլինգը կամ ճնշումը անկիրթ ու սովորաբար ճնշող-բացասական վարքային դրսե- վորումներն են՝ մի անձի առավելությունն ու ուժը մեկ այլ անձի հանդեպ վախեցնելով և ճնշելով ցուցադրելու համար: Այն իրավիճակները, երբ անհատը կամ խումբը միտումնա-վոր թիրախավորում են մեկ այլ անձի՝ պաճառելով նրան շարունակական ֆիզիկական և/կամ հուզական վնաս, անվանվում են բուլինգ:**[1]**[1] Քանի որ դասընթացը իրականացվում է դպրոցական երեխաների շրջանում, ապա նպատակն է՝ հատկապես շեշտադրել դրա կիրառությունը դպրոցներում: Հասկանալ թե այն ինչ վիճակագրություն ունի մեր երկրում և թե **ՅՈՒՆԻՍԵՖ-ը** ինչ մոտեցում ունի այս թեմայի շրջանակում: **Նյու Յորք, 19-ը սեպտեմբերի, 2018թ.**—Համաձայն **ՅՈՒՆԻՍԵՖ-ի** նոր զեկույցի՝ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն երեխա, ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել: «Կրթությունը խաղաղ հասարակություն կառուցելու հիմքն է, մինչդեռ աշխարհում միլիոնավոր երեխաների համար դպրոցն ինքնին անվտանգ վայր չէ»,- ասում է **ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Հենրիետա Ֆորը (Henrietta H. Fore): Դպրոցներում բռնությանը վերջ դնելու համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը իր գործընկերների հետ կոչ է անում հրատապ գործողություններ իրականացնել հետևյալ ոլորտներում՝** · Ապահովել համապատասխան օրենսդրության

[1] https://www.unicef.org/armenia/

առկայությունը և պահպանումը: · Ապահովել դպրոցներում բռնության կանխարգելման և խնդրի համապատասխան լուծման մեթոդների առկայությունը: ·
Աջակցել բռնության մասին բարձրաձայնող աշակերտներին և դասասենյակներում ու համայնքներում փոխել բռնության մշակույթը:
· Դպրոցում անվտանգություն ապահովող հաջողված լուծումներին ուղղված ներդրումներն ավելի արդյունավետ ու թիրախավորված դարձնել
· Հավաքագրել դպրոցներում կատարվող բռնության մասին տվյալները ավելի արդյունավետ ու տեսակավորված կերպով:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը քաջալերում է ողջ աշխարհի երիտասարդներին՝ բարձրաձայնել դպրոցներում և դրանց շուրջ կատարվող բռնության մասին՝ բռնությանը վերջ դնելու նպատակով և մեզ պատմելու, թե ինչպես են իրենք միասին աշխատում և ինչ լուծումներ են առաջարկում բռնությունը դպրոցից մեկընդմիշտ վերացնելու համար:

1.2 World Vison, Save the children –ի հարցման արդյունքները

Անվտանգություն և բռնություն (անվտանգություն, աշխատանք և դպրոցական աբսեն-

տեիզմ)

- Երեխաների 84%-ը նշեցին, որ Հայաստանում պետք է ավելի շատ ջանքեր գործադրվեն ծաղրանքն ու հետապնդումը կանխարգելեու նպատակով: Երեխաների 35%-ը նվազա-գույնը 1-5 անգամ դպրոցում ծաղրանքի ականատես են եղել, մինչդեռ երեխանե րի 90%-ը պատասխանել է, որ չունեն ծաղրանքի կամ բռնության են թարկվելու մտահոգություն:
- Հարցված երեխաների 38%-ը տեսել են՝ ինչպես են համայնքում երեխայի ծեծում կամ բռունցքներով հարվածում: Միայն 9%-ն են միջադեպերի մասին տեղյակ պահել համա-
  պատասխան մարմիններին:
- Երեխաների 11%-ը հայտարարեցին, որ այս կամ անցած տարի չեն կարողացել դպրոց

հաճախել աշխատանքում շաբաթական 14 ժամից ավել ներգրավված լինելու պատճառով: Այդ հարցվածների 73%-ը բնակվում է գյուղական համայնքներում: [2]

- Ըստ երեխաների՝ ծաղր պարունակող հինգ միջադեպից մեկը (21%) տեղի է ունեցել ար- տաքին տեսքի, իսկ 10%-ը՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակի պատճառով:
- Համաձայն դպրոցական երեխաների՝ հաշմանդամություն ունենալու հանգամանքը գրեթե երբեք ծաղրանքի կամ բռնության հիմք չի հանդիսանում: Հարցվածների 74%-ը մեծապես կարևորում են այն պնդումը, որ Հայաստանը պետք է ավելի շատ ջանքեր գործադրի հաշ- մանդամություն ունեցող երեխաներին կյանքի բոլոր ոլորտներում ներառելու համար:

1.3 Իմ կատարած հետազոտությունը

Հետազոտությունը անցկացվել է Շիրակի մարզի մի քանի դպրոցներում: Անանաուն հարցազրույց է վերցվել 5-10 դասարաններում սովորող 10-14 տարեկան երեխաներինց , որոնց տրվել է 10 հարցից բաղկացած հարցաթերթիկ: Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ հետազոտությանը մասնակցել է 95 աշակերտ, որոնցից 58% աղջիկ, իսկ ՝ 37%տղա: Հարցմանը մասնակցած աշակերտների սեռատարիքային բաշխումը ստորև ներկայացված է գծապատկեր 1-ում:

[2] https://www.wvi.org/hy/armenia



Գծապատկեր 1. Հարցմանը մասնակցած աշակերտների սեռատարիքային բաշխումը

Դպրոցական բուլինգի առկայությունը երբեմն պայմանավորված է նաև մանկավարժ-ների կողմից ոչ ճիշտ կամ ոչ արդյունավետ մեթոդների, մասնագիտական հնարների կիրառմամբ: Կարևոր էր նաև ծնողների մասին երեխաների պատկերացումների բացա-հայտումը, ուստի մեր կողմից տրված հարցերն ուղղված են եղել պարզելու, թե, ըստ իրենց, ով է լավ մանկավարժը :

Գծապատկեր 2-ում ներկայացված են այն բոլոր ընդհանուր դրական հատկանիշները, որոնք, ըստաշակերտների, պետք է ունենան ուսուցիչները:



Գծապատկեր 2. « Ըստ քեզ, ինչպիսի՞ հատկանիշներ նա ունի» հարցի պատասխանների վերլուծությունը:

Սակայն այն հարցին, թե որտե՞ղ են հիմնականում տեղի ունենում վեճերը, աշակերտների 52% նշել է՝ դպրոցում (դասարանում, միջանցքում, դպրոցի հարակից տարածքում, սպորտդահլիճում): Աշակերտների պատասխաններում առկա էր նաև՝ բակում (ֆուտբոլ խաղալու ժամանակ), գյուղերում՝ տանը տարբերակները: Խնդիրներ ունենալու դեպքում ինչպես են վարվում հարցադրմանն ի պատասխան՝ աշակերտները նշել են, որ ինքնուրույն են փորձում լուծել իրենց խնդիրները, արհամարհում են, հաշվեհարդար են տեսնում, դի-մում են ծնողներին, ուսուցչին կամ տնօրենին, և բացատրական աշխատանքներ են տա-նում: Սակայն կան աշակերտներ, ովքեր նշել են, որ ոչինչ չեն ձեռնարկում և ոչ ոքի չեն դիմում:
Կարևոր է նաև հասկանալ, թե որև է միջադեպի դեպքում ինչ են անում երեխաները, ում են պատմում դրա մասին: Այն հարցին, թե արդյո՞ք տանը

պատմում են ծնողներին դպրո-ցում կատարված իրադարձությունների մասին, երեխաների 40,6 %-ը նշել է, որ հազվադեպ է պատմում տանըխնդիրների մասին (գծ. 3):



Գծապատկեր 3

Դպրոցը պետք է լինի երեխաների համար անվտանգ միջավայր, սակայն հաճախ այնտեղ կարելի է հանդիպել այնպիսի երևույթի, ինչպիսին բուլինգն է, ինչը պայմանավորված է միջավայրում տարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով: Դրա պատճառը հաճախ ինքնահաստատման խնդիրներ ունեցող երեխաներն են, որոնք հաճախ դրսևորում են բացասական վարքի տարբեր՝սոցիումի կողմից անընդունելի ձևեր: Հետազոտության ամբողջականության համար կարևոր էր պարզել, թե, ըստ երեխաների, ովքեր են դպրո-ցում հայտնվում խնդիրների կենտրոնում: Աշակերտների կողմից նշված պատաս-խանները շատ տարբեր են, ու յուրաքանչյուրն իր ձևով է ներկայացրել իր պատկերացումները:

Եվ իմ հետազոտության արդյունքում բացահայտել եմ բուլինգի արտահայտություններ, որոնք տրվել են աշակերտներին ուսուցիչների կողմից : Այդ խոսքերը, արտահայտու-թյունները այնքան խորը հետք են թողել, որ որոշ աշակերտներ չեն ցանկացել նույնիսկ դպրոց գնալ և ծնողները ստիպված , համոզելով մի կերպ տանել դպրոց: Եղել են ծնողներ, որոնք ի զորու են եղել պայքարել դրա դեմ, իսկ որոշները ՝ ոչ : **Ձեզ եմ ներկայացնում այդ դառը արտահայտությունները.**

- **Չեք կարող սովորել, մի՛** սովորեք, դեբիլների դպրոցն է սա:
- **Երեխան նկարվում է ուսուցչուհին ասում է «սիրածներիդ համար ես նը-կարվում, ա՛յ , ապու՛շ:**
- «**Սաղ օրը մենակ թողնես բտվի, դրա համար էլ դաս չես սովորում», - տվյալ աշակերտը թմբլիկ է, և այս խոսքերից հետո սթրես է տարել, րի սիրում իրեն:**
- Էդ է ձեր դաստիրակությունը, գեղացի չեք, գեղացին ուր , կուլտուրան ուր:
- Ցու՛, էս ինչ գոմի հոտ գուկա, սաղ օրը ուշքումտքերդ գոմն է:
- Քո մայրիկը երևի քո պես դեբիլ է, որ քեզ դաս չի սովորեցնում;
- Հորդ էլ եմ տաս տվել, հերդ ինչ էր , որ իրենից ետ գցածը ինչ լիներ:
- Այ փուշ կերած մալ
- Վաքսի վրայի մեյմուն
- Թրքի միջի բոլոջ
- Դդերի միություն
- Եզագլուխ

Նաև մի այսպիսի համգամանք եմ պարզել, որ բարձր օղակներում, տղաները երբ դաս են սովորում, մյուսները ծաղրում են: Ես անձամբ եմ հարցազրույց վերցրել մի տղայից , որն մանրամասն պատմեց, թե ինչ է պատահել իր հետ. Երբ որ այդ տղա դաս է պատասխանել, դասամիջոցին իր դասընկերները ծեծել են, այդպես տևել է

շուրջ 3 ամիս և նա ստիպված է եղել պատմել իր ծնողին: Ծնողը դպրոց է ներկայացել, զրուցել ուսուցչուհու հետ, որն էլ վերջինիս պատասխանել է , որ ինքը չի պատրաստվում տղաների կռիվների մեջ խառնվել: Հաջորդ օրը , դասերի ավարտից հետո, այդ տղային տարել են մեկ այլ ուրիշ վայր և 6 հոգով լավ ծեծել: Մայրը դպրոցից հանել է և տեղափոխել մեկ այլ ուրիշ դպրոց, որտեղ բոլորը սովորեւմ են և միմյանց չեն նախատում դրա համար: Այդ երեխան գերզանց ավարտեց միջին դպրոցը և ընդունվեց քոլեջ, մտադիր է դառնալ տնտեսագետ: Սակայն , ցավոք սրտի այդ երեխան ունի տեսողության խնդիր , որի պատճառն է եղել այդ ծեծը: Դեպքից անցել է 9 ամիս, մինչ օրս ոչ ոք չի պատժվել, ոչ ոք չի կարողացել ապացուցել, որ դա իսկապես այդպես է եղել:

Գլուխ 2. Միջազգային փորձը

Ոչ մի երեխա չպետք է վախենա դպրոց գնալուց. Բայց երբ յուրաքանչյուր երրորդ երե-խային վերջին ամսվա ընթացքում գոնե մեկ անգամ ենթարկում են բռնության, մեր կըր-թական համակարգերը թերանում են աշակերտներից: Հետևանքները ծանր են և հեռա-հար առանձին ուսանողների և ընդհանուր առմամբ հասարակությունների համար: Այս խնդիրը լուծելու համար **ՅՈՒՆԵՍԿՕ-ի** անդամ երկրները յուրաքանչյուր տարվա նոյեմ-բերի առաջին հինգշաբթին անվանել են Բռնության և ահաբեկման դեմ պայքարի միջազ-գային օր դպրոցում, ներառյալ կիբերհարձակումը: **2020 թվականի նոյեմբերի 5-ն** առա-ջին անգամն է, երբ աշխարհը նշում է այս կարևոր միջազգային օրը: Բուլինգի և դպրոցական բռնության հետևանքները չեն կարող անտեսվել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն երեխաները, ովքեր հաճախ ենթարկվում են բռնության, երեք անգամ ավելի հավանական է, որ իրենց դպրոցում դրսից զգան և երկու անգամ ավելի հավանական է, որ բաց թողնեն դասը, համեմատած իրենց հասա-կակիցների հետ, ովքեր չեն ենթարկվում ահաբեկման: Նրանք նաև ավելի հավանական է, որ գիշերները չեն կարող քնել և մտածել են ինքնասպանության մասին: Բուլինգինգը նաև ազդում է ուսանողների կրթական արդյունքների վրա և նրանց ավելի հավանական է դարձնում միջնակարգ դպրոցից հետո թողնել ֆորմալ կրթությունը:
Թեև խնդիրը համատարած է, բայց անհաղթահարելի չէ: Ինչպես **ՅՈՒՆԵՍԿՕ-ի** անդամ երկրները իրավացիորեն ընդունում են, ահաբեկումը հաղթահարելու և բոլոր աշակերտ-ները դպրոցում իրենց ապահով զգալու միակ միջոցը դպրոցական համայնքի և տարբեր հասարակությունների միջև գործընկերություն ստեղծելն է: Մենք պետք է միասին աշխա-տենք՝ լուծելու դպրոցում բռնության հիմնական պատճառները և խթանելու ուսանողների իրավունքների հարգման մշակույթը և բռնության նկատմամբ զրոյական հանդուրժողա-կանության քաղաքականությունը: Դպրոցական համայնքները և կրթական ողջ ոլորտը պետք է համախմբվեն՝ մշակելու ապացույցների վրա հիմնված ռազմավարություններ և

լուծումներ իրականացնելու համար: Սկսած ամուր քաղաքականության շրջանակներից և նոր ուսումնական ծրագրերից, որոնք նպաստում են հոգատար դպրոցական մթնոլորտին, ուսուցիչների վերապատրաստում և ազդակիր ուսանողներին աջակցություն ցուցաբե-րելու համար՝ ամբողջ կրթական մոտեցումը կարևոր է:

Մանկավարժները կշարունակեն կատարել իրենց դերը, որպեսզի բոլոր աշակերտները կարողանան վայելել անվտանգ և աջակցող դպրոցական միջավայր՝ զերծ ահաբեկումից և բռնությունից:

2.1 Ի՞նչ է ուսուցչի ահաբեկումը

Մանկավարժների կամ դպրոցի անձնակազմի կողմից ահաբեկելը կարող է ունենալ տարբեր ձևեր, որոնք հաճախ դրսևորվում են որպես ահաբեկում, սպառնալիք, խտրականություն, բացառում կամ անփութություն: Վատ վերաբերմունքը կարող է ներառել առանց պատճառի կրկնվող կարգապահություն, նվաստացնող կամ նվաստացնող արտահայտություններ, անտեսում մտնելը (կամ միանալը), երբ դասընկերները բռնության են ենթարկում աշակերտին կամ չափազանց բացասական գնահատականներ տալը դասարանի երեխաների առջև:

Ուսուցիչների կողմից վատ վերաբերմունքը և ահաբեկչական վարքագիծը լայնորեն տարածված մտահոգություն է: Մեկ հարցման ժամանակ ուսուցիչների 45%-ը խոստովանել է, որ իրենց աշակերտներին ահաբեկել են: Եթե այդ ահաբեկումն ու խտրական ոտնձգությունը չլուծվի, կարող է խանգարել աշակերտի որակյալ կրթություն ստանալու կարողությանը և լրջորեն ազդել նրանց մտավոր բարեկեցության վրա: Ըստ մի ուսումնասիրության, հոգեկան առողջության պոտենցիալ երկարաժամկետ հետևանքները ներառում են ցածր ինքնագնահատական, դեպրեսիա, անհանգստություն և անհատականության խանգարումներ:

Ինչպես դիմել ուսուցչի ահաբեկմանը

Հաշվի առնելով, որ շատ երեխաներ վարանում են քննարկել վատ վերաբերմունքը, և վստահելի պաշտոնը, որը սովորաբար զբաղեցնում են ուսուցիչները, կարող է

դժվար լինել մանկավարժների կողմից ահաբեկումը ճանաչելն ու անդրադառնալը: Կարողանալով բացահայտել վատ վերաբերմունքի ընդհանուր նշանները և այնուհետև համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ դուք կարող եք օգնել դադարեցնել ահաբեկումը և սահմանափակել ձեր երեխայի բացասական հետևանքները, եթե ուսուցիչը իրեն ահաբեկում է: Ստորև բերված են խորհուրդներ՝ ձեր երեխայի և այլ ուսանողների համար ավելի ապահով, ավելի աջակցող կրթական միջավայր ստեղծելու համար ուսուցչի կողմից հալածանքի դեմ պայքարելու համար:

Ճանաչելով ահաբեկման նշանները

Ուսուցիչների կողմից հալածանքը կարող է պատճառ դառնալ, որ ձեր երեխան զգացմունքային անհանգստություն առաջացնի, դրսևորի վարքագծային մարտահրավերներ կամ պայքարի առարկաների հետ, որոնցում նա սովորաբար գերազանցում է: Ձեր երեխայի կյանքում ահաբեկման այս և այլ նշանների ճանաչումը կարող է լինել առաջին քայլը՝ ուղղված իրավիճակին: Նշաններ, որ երեխան ենթարկվում է բռնության ուսուցչի կողմից, ներառում են.

- Դպրոցից խուսափելու համար հիվանդություն ձևացնելը
- Նկատելի փոփոխություններ ինքնագնահատականում
- Զգացմունքային անհանգստություն
- Սոցիալական մեկուսացում
- Վարքագծային մարտահրավերներ
- Նորմայից ցածր գնահատականներ
- Չափազանց կոպիտ կամ բացասական դիտողություններ թղթերի կամ վարքագծի վերաբերյալ զեկույցների վրա

- Դպրոցական աշխատանքով զբաղվելու ցանկության նվազում

Դիտողություններ ուսուցչի նվաստացուցիչ կամ չափազանց քննադատական պահվածքի վերաբերյալ

Զգացմունքային անհանգստությունը, որը հաճախ դրդվում է ուսուցիչների կողմից հալածանքների հետևանքով, կարող է դրսևորվել որպես վախ, անհանգստություն կամ տխրություն: Միաժամանակ, ակադեմիական կատարողականի անկում կարող է առաջանալ, երբ բռնության ենթարկվող աշակերտը պայքարում է կենտրոնանալու համար, կորցնում է հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ կամ զարգացնում է ուսման նկատմամբ բացասական վերաբերմունք: Բացի այդ, սոցիալական մեկուսացումը կարող է ակնհայտ դառնալ. աշակերտը կարող է հեռանալ իր հասակակիցներից կամ խուսափել դպրոցական իրադարձություններից, ինչպես նաև նախ բացահայտելով ահաբեկման նշանները, այնուհետև քայլեր ձեռնարկելով, աշակերտները, ծնողները և դպրոցական համայնքները կարող են միասին աշխատել՝ ստեղծելու ավելի անվտանգ և անվտանգ միջավայր: Ավելի ներառականուսումնական միջավայր: Ուսուցչի կողմից հնարավոր ահաբեկմանը պատասխանելիս առաջին քայլը սովորաբար կլինի թույլ տալ ձեր երեխային բացատրել, թե ինչ է տեղի ունեցել: Կարեկցաբար, խնդրեք նրանց մանրամասն ներկայացնել, որպեսզի կարողանաք ավելի լավ հասկանալ իրավիճակը. և տրամադրեք նրանց էմոցիոնալ աջակցություն, որը նրանք հավանաբար պետք են այդ պահին: Տեղի ունեցածի հստակ պատկերացում ունենալը կարող է հեշտացնել ձեզ օգնություն փնտրելը և լուծումներ մշակել:

Իմացեք համապատասխան քաղաքականությունները, օրենքները և կանոնակարգերը

Նախքան ձեր մտահոգությունները դպրոցի ադմինիստրատորներին կամ այլոց, ովքեր կարող են լուծել իրավիճակը, ձեզ համար կարևոր է հասկանալ ձեր երեխայի իրավունքները իրենց հատուկ սահմաններում:

Իրազեկվիր

Ուսուցչի կողմից ահաբեկելը կարող է երկարատև ազդեցություն թողնել ուսանողների և նրանց ընտանիքների վրա: Բուլինգը լուծելու և հաղթահարելու համար շատ կարևոր է, որ տուժածները ճանաչեն վատ վերաբերմունքի նշանները, պաշտպանեն իրենց և օգնություն փնտրեն: Եթե ուսուցչի ահաբեկումը ազդել է ձեր երեխայի վրա, հոգեկան առողջության մասնագետը կարող է օգնել ձեզ տրամադրել նրան անհրաժեշտ աջակցությունը և պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես կարող եք արդյունավետ կերպով լուծել իրավիճակը: Լիցենզավորված թերապևտի հետ համընկնումը կարող է կառուցողական հաջորդ քայլ լինել ձեր ընտանիքում կրթական հաջողությունների և մտավոր բարեկեցության խթանման ուղղությամբ:

Եզրակացություն

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել, որ Հայաստանում գոյություն ունի բուլինգի բավականին լուրջ խնդիր, սակայն դրա մասին ընդունված չէ խոսել, այնպես, ինչպես ընտանեկան կամ սեռական բռնության կամ այլ խնդիրների մասին: Սակայն հայաստանյան իրականությունը հատուկ լուծումների կարիք ունի: Հասարակությունը կարծես քողարկում է բուլինգի դեպքերը: Բուլինգի խնդիրն ըստ էության բարձրաձայնվելու փոխարեն թաքցվում է և ներկայացվում որպես հայ հասարակությանը ոչ բնորոշ մի երևույթ: Այսպիսով, դպրոցական բուլինգի հիմնական պատճառը ծաղրողի հոգեկան խնդիրներնեն: Ծաղրողը հաճախ կամքով թույլ մարդ է և իրեն բարձր է զգում միայն այն ժամանակ, երբ ծաղրում է մնացածին, երբ իր աշխարհում նա դառնում է բարձրագույնը: Հետևաբար այսպիսի մարդկանցից ոչ թե պետք է հեռու մնալ կամ, ինչպես անում են որոշ ուսուցիչներ, թևերը թափ տալ և ասել, որ այդ երեխան չի ուղղվի, այլ փորձել հասկանալ նրան, հասկանալ, թե ինչու է նրա մեջ այդ ցանկությունն առաջանում, և գոնե ջանալ այդ երեխային ճիշտ ուղու վրա դնել:

Մեր հասարակությունը ձգտում է խնդիրները ստվերում պահել այն պատճառաբանությամբ, որ եթե խնդիրը փակի տակ է, դադարում է տարածվել և գոյություն ունենալ: Սակայն պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ, որ երեխայի կյանքում եղած ցանկացած երևույթ, լինի դրական թե բացասական, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա: Եթե կանխնդիրներ, կգտնվեն դրանց լուծումները, պարզապես պետք է տեսնել, հասկանալ խնդիրը և լուծումներ գտնել: Բուլինգի խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է գտնել երեխա-ծնող-ուսուցիչ ակտիվ համագործակցության շնորհիվ: Շատ կարևոր է, որ ծնողներն ուշադրություն դարձնեն իրենց երեխաների ամենօրյա վարքին,

այնպիսի մանրուքների, ինչպիսիք են, օրինակ՝ դպրոց գնալու ցանկության բացակայությունը, նույն մարդուց շարունակական բողոքը, անտրամադիր կամ ընկճված լինելը: Եթե նման նախանշաններ կան, ապա մեծահասակները նախ պետք է երեխայի ներքին տագնապայնությունը նվազեցնեն շարունակական աշխատանքի միջոցով:

Գրականության ցանկ

1 Аверьянов А.И. Школьный буллинг в воспоминаниях студентов МГПИ

// Современные проблемы и пути их решения в науке, транспорте, производстве

и образовании: Мат-лы междунар. научн.-практ. конф. – Вып. 4. Том 15. -

Одесса, 2011. – С. 22-26.

2 https://www.unicef.org/armenia/

3 https://www.wvi.org/hy/armenia